

անցան հարիւրաւոր տարիներ և Առ-
 թամարայ գահակալներն իրենց իշխա-
 նութեան տակ գտնուած թէ սուրբ
 Նշուհի գերեզմանի և թէ ուրիշ վա-
 նորեից ոչ թէ միայն չեն կարողացեր
 երբ կրնային ըստ արժանւոյն զանօնք
 շքեղութեան մէջ պահել, այլ և նոցա
 խանգարման եւս շատ անգամ պատ-
 ճառ եղած են : Գահ մի որ աղբին
 պատիւը կրնե՞րկայացնէ, պարտ է իւր
 վրայ բազմող ունենալ ազգասէր հայ-
 բնասէր հայրապետներ. երբ նաւու
 մի նաւապետ անմիտ և տգէտ է, ան-
 շուշտ միշտ նաւը վտանգի ենթակայ
 է. այսպէս ժողովրդեան մի հայրա-
 պետ կամ առաջնորդ երբ տգէտ և
 շահամոլ է, անշուշտ ժողովուրդը միշտ
 թշուառութեան եւ խեղճութեան
 ենթակայ է : Աւրեմն պարտ է մեզ ջա-
 նալ այնպիսի աթոռներու վրայ այն-
 պիսի հայրապետներ բազմեցնելու,
 որք ոչ միայն Աղբին պատիւ բերեն,
 այլ և թէ հայրենեաց և թէ աթոռոց
 փառք և պատիւ կարենան համար-
 ուիլ. և սաի աւելի Այսպուրականի
 ժողովրդեան համար կարեւոր է, վա-
 սրն զի Հայը հոն աւելի բազմաթիւ
 է քան ուրիշ երկիրներ :

(Հարաւանականութեան)
 (Յովհաննէս վարդապետ
 Բաղեան Աթամարցի :

ԲԱՐՈՅԱԿԱՆ

« Անշափ հիւանդութեանց
 տակ կնալը մարդկանց ամօթ է .
 վասն զի բարի վարուց արգասիքն
 է առողջութիւնը : »

ՅԵՆԵԼՕՆ

Մարդու բնական ամենակատար
 կազմութիւնը իւր դիմացկուն ըլլա-
 լուն ապացոյցն է : Մարդը իւր բնա-
 կան կազմութեան նկատմամբ երկար

առողջ և հանգիստ ապրելու սահմա-
 նուած է . իսկ եթէ անոր կազմութե-
 բարոյական մասը նկատենք, այն բոլ-
 րովին անմահութիւնն է : Արդ ինչո՞ւ
 ուրեմն մարդիկ քիչ կ'ապրին, և ինչո՞ւ
 թշուառ կ'ապրին :

Արդարեւ մեր բնական կազմու-
 թիւնը իւր կանոնաւորութեամբը և
 հաստատութեամբը կարող է տոկալ
 շատ բաներու առանց իւր հաստա-
 տութեան վնասելու, այսու ամենայ-
 նիւ այս բանական շէնքը իւր դէմ
 դիմող եւ իւր հաստատութիւնը
 խախտել ուզող շատ մը հակառա-
 կորդներ ունի. նոյն իսկ տարերք, ո-
 բովք ինքը բաղադրուած է, իրեն
 ներհակ են. ուր թողունք կախները,
 սուրերը, նաւաբեկութիւնները և
 այլ անակնկալ և անդիմադրելի դի-
 պուածները, որք հանապաղ մեր կե-
 նաց հետ մարանչելով թէ կը կար-
 ճեցընեն եւ թէ բոլորովին կը սպա-
 սեն Ասկայն ոչ տարերք և ոչ արտաքին
 որ և իցէ ազդեցութիւն կամ դիպ-
 ւած չէ կարող մարդու կազմութիւն
 այնպէս խանգարել և թշուառացնել
 կեանքը ինչպէս որ կ'ընէ նոյն իսկ
 մարդը, այն մարդիկ իրենց կենաց թրշ-
 նամիներն են և իրենք են որ իրենց կը
 շնասեն քան թէ սյւք . ինչպէս որ
 տան մը, քաղաքի մը և թագաւորու-
 թեան մը արտաքին թշնամիներէն ա-
 ւելի վտանգաւոր եւ երկիւղալի են
 ներքին թշնամիները, այնպէս ալ մար-
 դու արտաքին թշնամիներէն աւել-
 լի ահաւոր և եղենոնազործ է ներքին
 թշնամին : Այն զի ինչպէս որ ըսինք,
 արտաքին առաջին թշնամիքն են տա-
 րերք, որոց ներգործութեամբ շատ
 անգամ կրնայ տկարանալ մարդ, բայց
 բարեբաղդաբար Արարիչը գթութիւ
 այդ վնասուն առաջին առեր է. դը-
 նելով բնութեան մէջ զանազան դիւ-

րին, սյարդ եւ օգտակար գեղեր, որոց ներդործութեամբ կ'ոչնչանան տարերաց ազգեցութիւնը, և մարդը խիստ գիւրութեամբ և շուտով իւր առողջութիւնը կը գտնայ, մանաւանդ եթէ ներքին գործարանները (ուրիշ պատճառներով) տկարացած չըլլան, անոնք ամենը կը միաբանին այդ եկամուտ թշնամին կ'արտաբոսեն, որով մարդ առանց վնասուելու և առանց այն տկարութեան մէկ հետքը ունենալու, կը հասնի իւր առաջին կորովի և աշխոյժ վիճակին: Սա եւս չմոռանամք ըսելու, որ թէ այս և թէ միւս արտաքին պատճառաց, պատահմանց և դիպուածոց շատ անգամ կարող եմք առաջ ըն առնուլ, քանի որ դեռ անոնք չեն հասած, ըսել է որ եթէ շատ անգամ այս արտաքին ազգեցութեանց կը հանդիպինք, այն եւս մեծադոյն մասը մեր տգիտութենէն անխոհեմութենէն և անզգուշութենէ յառաջ եկած է: Սյարդը կը սուլըրինք, որ բնական հիւանդութիւնք խիստ քիչ են, որոց դարմանն ալ դիւրին և առ ձեռն են, կը սուլըրինք նաև որ այն արտաքին թշնամեաց ազգեցութիւնն ալ հրաւիրողը դարձեալ մենք ենք, որ եթէ ոչ ներդործութեան գէթ կարեկցութեան արժանի կրնանք համարուիլ:

Սակայն ասոնցմէ զատ մարդկային այս գեղեցիկ շէնքը, մարմնայ այս անհամեմատ կազմութիւնը խանգարող, ապականող և երկարատե թըշուառութեան մասնող ուրիշ թշնամիներ ալ ունինք, որ ներքին է, և որ աւելի մեր ազատ կամօքը կը շարժենք եւ կը դրդուենք մեզի գէմ, որ այն ինքն է մեր կիրքերը: Բնու թշնամի մը հակառակորդ մը չի կայ, որ այն աստիճան կարող ըլլայ մեզ վնասել, ինչպէս կը վնասեն մեզ մեր անասնձ և անբանական հաճոյքները, երբ աւտնք բանական խորհրդով կանոնաւո-

րուած չեն, երբ սահմանաւոր և բարեկարգ միջոցներով չեն գործածուիր, անտանելի եւ անդարմանելի հետեւանքներ կ'ունենան: Սյարդը մէջ մարդուս կենաց ամենաոխերիմ թըշնամին ցանկական կիրքն է, որուն աւանորեաց զոհերը մեր աչաց առջեւ են, և սակայն մարդիկ անզգայ անոր կոտորածներուն հաճութեամբ կ'ողջունեն զայն: Կրից հողմուները հանապաղ կը բաղխեն այս շէնքը, հեշտախտութեան հեղեղը կը փորէ անոր հիմը, և թէ որ առօրեայ զուարճութեանց աւաղին վրայ շինուած է այն, անոր կործանումը խիստ մեծ և անկանգնելի է. իսկ ընդհակառակն, թէ որ մարդուս կենաց հիմը ձգուած է բարոյականութեան հաստատուն եւ անխախտ վիճակին վրայ, եւ մրտաց լուսաւորեալ հանգամանքներով ամեն արտաքին ու ներքին վշտանգներուն դէմ խոհեմութեամբ պատրաստուած, այն ատեն բոլորովին ապահով է, այն ատեն միշտ առողջ է և հանգիստ, վասն զի « անասնձ հեշտախտութեան սէս առողջութեան վնասող բան չիկայ »: « որ և իցէ հեշտութիւն մարդուս և միտքը մարմինը կը տկարացնէ: » Կանոնաւորէ կիրքերդ, եւ ահա ազատ ես բոլոր վտանգներէն:

Ուրեմն մարդկան ազգի մէջ մանաւանդ հիմնական ատեն այսչափ անդարմանելի եւ դժուարաբու ժելի հիւանդութեանց բուն պատճառը անբարոյականութիւնն է, վասն զի բնութեան ճիւղը, բժշկաց ճարտարութիւնը և սիրալիբ խնամոց օգնութիւնները իսպառան օգուտ կը լինին, և խեղճ վտանգեալը առանց առողջութիւն գտնալու կենանք ցաւօք և հեծութեամբ կ'անցնէ եւ կ'իյնայ անյուսութեան մէջ:

Մարդը, որ բանականութեամբ կը պանծայ, ամօթ չէ իրեն՝ որ այս

աստիճան անբարոյական ընթացքով
իւր կեանքը թշուառացնէ. արդար և
խիստ ամօթ է մարդուն այսչափ հի-
ւանդուլթեանց մէջ խնայը , որ իւր
անբարի վարուց ապացոյցն է . վասն զի
բարի վարուց արդասօխն է առողջու-
թիւնը :

Կ. Ե.

ՄՐՁԱՆ ՀԱՆԳՍԵԱՆ

Ստրկաւագ Գրիգորի Ստրգուեան որ 'ի
Թաշառեկ կեսարեայ :

ՄԻՆՉ պատանի և սնանէր ընդ հայրենեայն
ստեղծք ,
Նախանձ աճէր և 'ի սրտին փառաց տան Տեառն
անձկանօք :
Թողոր զհայր մայր քսանամեայ 'ի հասակին
եռանդուն .
Թողոր 'ի բաց և զհայրենուն զմիշտ դալար վայրս
քաղցրագոյն ,
Գայր բնակութիւն ընտրէր անձին 'ի Սիօնի
յարկս անձուկ .
Յանապատի անջուր յերկրի վարժեալ անձամբ
զանձն փափուկ :

Չերկեամ՝ և եթ աշակերտեալ առ դաստատուս
հայկաբան ,
Անուհետեւ ամ մի ողջն դաստատուր
քաղաբան :

Չոր ձիւս առից գովել աստէն , խոհեմագոյն
'ի ընթացս ,
Ըզէր գրուէր մեծաց քան զինքն , ակնածելէր
մանկանց :

Քաջ ձանձուր ըզափ պոյման . յոր աշխատէրն
փոյթ ուսեալ .
Եւ որ է 'ի գովելն , աննախանձ միշտ ուսուցեալ :
Բարբեցան մինչ երեք ամբ , ապա տան Տեառն
անձուէր ,

Սրտիւ բոլոր 'ի յաստիճան Սարկաւագին հասանէր .
Չերմիւ պաշտէր յեկեղեցոյ զուրբ Օրինաց
բուն պաշտօն .
Չառեալ անփոյթ ուսման էրբք , ամենեւին
կեսայր զգօն :

Մինչ այս մինչ այն յաւիտենին շափ ընանէր
'ի վերուստ ,
Հրաման վերինն անդառնալի մեղմիւ գոչէր
'ի յերկնուստ .

« Օ՛ն արգ հանգիթ » 'ի ցաւոցդ յերանելացն
'ի կայան ,
Չի կայ քո և աշխարհի հոգւոց բազմաց
անազման :

Առեալ ըզձայն երբ հրամանին , ոչ գժկամակ ,
այլ յօժար ,
Ելէք զաշխարհամենայնիւ վերին կոչմանն հեղաբար
Հրնազանդեալ , 'ի քսաներորդ և հինգերորդ յամ
հասակին ,
Եւ աւանդեաց զհոգին 'ի կամս Էացուցին
բնաւից Էին ,

Ընդ այս 'ի խոր խոցի 'ի սիրտ 'ի ցաւս իւր
սիրելին ,
Բայց կամք Էին է այս օրհնեալ 'ի սկզբանէ .
և եացին :

ԺԱՄԱՆԿԱԳՐԱԿՆԵՐ

Երգարից մեր Արժ . Թղթակիցը
յիշեալ քաղաքի Ռուսաց տէրուլթե
հիւպատոսին յանկարծական մահը կը
գուժէ մեզ հետեւեալ պարագաներով .
Ռուսաց ԱԵՏ . Կայսեր անուանը տա-
րեդարձին անջի որը հրաւիրագրով մի
իմաց կուտաց տեղւոյն բոլոր հիւպա-
տոսներուն և երեւելի քաղաքացւոց
հետագայ աւուր տօնին ներկայ գլա-
նուելու , որու համար պատրաստու-
թիւն տեսած էր : Բայց գժբաղդա-
բար նոյն իրիկունը եկեղեցւոյ զան-
գակները իւր անակնուկելի մահը
գուժեցին , եւ հետեւեալ աւուր
տօնական եւ ուրախական հանգէ-
սը սգալի եւ յուղարկաւորութեան
հանգէսի փոխուեցաւ : Հանգու-
ցեալ հիւպատոսը Խլիաս Սարկոս ,
աղբաւ յոյն էր , բայց բարեպաշտ և
բարեսիրտ անձմի ըլլալով՝ շատ պարա-
զաներու մէջ լաւութիւններ բրած է
Հայոց աղքային գործերուն մէջ . վասն
որոյ Երգարից եկեղեցւոյն տեսուչ
Արժ . Օպարիա վարդապետը ոչ մի-
այն ներկայ գտնուած է յուղարկա-
ւորութեան , այլ և 'ի խնդրոյ յոյն կը-
ղերին եւ հանգուցեալ հիւպատոսի
որդւոյն Նորմիս Սարկոսին՝ իւր եկե-
ղեցական շուրջառովը նորա հոգւոյն
հանգստեան կարգացեր և մինչեւ 'ի
գերեզման երթալով՝ հանգստեան շա-
րականներ երգած է Արժ . Աթանաս
վարդապետի հետ , և մեծ պատուով
ընդունուած է : Աւրախ ենք մեք , նոյն
պէս և տեղւոյն հայագէիք և բոլոր
հասարակութիւնը , որ հանգուցեալ
Խլիաս Սարկոսը իրեն արժանաւոր
ժառանգ կը թողու իւր որդին Նոր-
ճիս Սարկոսը :

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սուրբ Էջմիածնի մայր Աթոռոյն տղարանն
հրատարակուած ԱՐՄԱՏ անուն բանասիրական տետ-
րին բաժանորդագրութիւնը մայիս 1 էն կ'ըսկի :
Բաժանորդագիրը Պոլսոյ համար 5 արծաթ մե-
ծիտ է . իսկ գաւառաց համար 5 ու կէս կանխիկ
վճարելի :
Օտտ տետրակ առնել ուղղօք , պէտք է ամեն
մեկ տետրին շորս գահեկան վճարել :
Պոլսոյ մէջ բաժանորդագրութեան տեղին է
Մեքման թիւ 29, և թիւ բրձի իսան վարի յարկ թիւ
43 Մարգարեան և Սրապեան ընկերոց գրատունն ըլլ :